

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Հոկտեմբերի 18-ին, ուրբաթ օր, գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը հովվական այցելությամբ մեկնեց Թբիլիսի։ Սրբազան հոր ընկերակցում էին հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը և բարեշնորհ Սարգիս, Կարապետ և Խորեն սարկավագները։

Հոկտեմբերի 19-ին, շաբաթ օր, առավոտյան ժամը 9-ին, գերաշնորհ սրբազան հայրը գնացքով հասավ Թբիլիսի։ Վրահայոց թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանի, թեմի քահանայական դասի և թեմական խորհրդի անդամների առաջնորդությամբ սրբազանը ուղղվեց Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցին և «Հրաշափառ»-ով մուտք գործեց տաճար, ուր հավաքվել էր հավատացյալ ժողովրդի մեծ բազմություն։ Առաջնորդ հայր սուրբը, հանուն վրահայոց թեմի հավատացյալների և եկեղեցական դասի, բարի գալստյան սրտագին և ջերմ խոսք ուղղեց Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանին։ Սրբազանը եկեղեցում իր ուխտը կատարելուց հետո խորին շնորհակալություն հայտնեց հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետին ջերմ ընդունելության համար։ Երեկոյան սրբազանը նախագահեց կիրակամտի ժամասացության։

Հոկտեմբերի 20-ին, կիրակի օր, Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը։ Եկեղեցին լիքն էր հավատացյալներով։ Բարեպաշտ հայ հասարակությունը շտապել էր եկեղեցի՝ սրբազան հոր օրհնությունը ստանալու համար։

Գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը սուրբ պատարագի ընթացքում կատարեց քահանայական շնորհաբաշխություն. նա քահանա ձեռնադրեց Հոգևոր Ճեմարանից շրջանավարտ շնորհունակ Հովհաննես սարկավագ Դանիելյանին։ Վաղուց է Թբիլիսիի հավատացյալ ժողովուրդը ներկա չէր եղել ձեռնադրության Ս. Խորհրդի կատարման։ Այդ օրը անմոռանալի պիտի մնա Թբիլիսիի հայերի հիշողության մեջ։ Նորընծան անվանվեց Տ. Հովհաննես քահանա։ Ձեռնադրիչ սրբազանը, շնորհաբաշխության հուզիչ արարողությունից հետո, գեղեցիկ և բովանդակալից քարոզ խոսեց «Բազումք են կոչեցեալք, այլ սակաւք են ընտրեալ» բնաբանով և հայրական հորդորներ տվեց նորընծա Տ. Հովհաննես քահանային՝ օրինակ լինել հոտին «բանիւք, գնացիւք, հաւատովք»։ Սրբազանի քարոզը խոր տպավորություն թողեց բոլորի վրա։ Քարոզի վերջում սրբազանը կոչ արեց հավատացյալներին՝ սիրով և հոգատարությամբ շրջապատել միշտ մեր Մայրենի հարազատ Եկեղեցին, նախանձախնդիր լինել նրա պայծառության համար։

Սուրբ պատարագից հետո գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետի ընկերակցությամբ, այցելեց Վրաստանի գեղեցիկ մայրաքաղաք Թբիլիսիի տեսարժան վայրերը։

Երկուշաբթի օր, հոկտեմբերի 21-ին, սրբազանը վերադարձավ Մայր Աթոռ, Թբիլիսիից իր ստացած լավագույն տպավորություններով։